

**Չարց** Ո՞վ է պատասխանատվություն կրում էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառքի սարքերի ամբողջականության և պահպանման համար:

**Պատասխան** Սպառողը պատասխանատվություն է կրում միայն այն առևտրային հաշվառք սարքերի ամբողջականության եւ պահպանման համար, որոնք տեղակայված են իր սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում եւ այդ մասի նշված է պայմանագրում: Սպառողի սեփականությունը հանդիսացող, բայց իր սեփական կամ իր կողմից տնօրինվող տարածքներից դուրս տեղադրված հաշվառքի սարքերի ամբողջականության եւ պահպանման համար պատասխանատվությունը կրում է մատակարարը: